**Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,**

**բողոքների 2016թ.-ի ամփոփագիր**

2016թ-ի ընթացքում ստացվել է 1817 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 1552 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 1524-ը, մերժվել՝ 23-ը, ընթացքի մեջ է 5 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 19 քաղաքացի, որից 14-ի խնդրանքը բավարարվել է, 3-ինը՝ մերժվել, 2 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 129 դիմումից դրական պատասխան է ստացել 124-ը, մերժվել է՝ 4-ը, 1 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 37 քաղաքացիներից 20-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 12 դիմում մերժվել է, 5 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 12 քաղաքացիներից 9-ը ստացել են դրական պատասխան, 2-ը մերժվել, 1 դիմում ընթացքի մեջ է :

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են 22 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 25 քաղաքացիներից 24-ը ստացել են դրական պատասխան, 1 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են 32 քաղաքացի, բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 11 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

**Փ. Ղազարյան ՝ մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ**